ժամանակակից գիտության բոլոր կարևորագույն ուղղություններում, ամեն կերպ նպաստում տեխնիկական առաջընթացի արագացմանը: Մի շարք հիմնական գիտական ուղղություններում սովետական գիտությունը առաջատար դիրք է գրավում աշխարհում, որը թույլ է տալիս լուծել երկրի էկոնոմիկայի զարգացման և պաշտպանունակության կարևոր խնդիրներ:

Անդրադառնալով Հայաստանի գիտնականների գործունեությանը զեկուցողը նշեց այն մեծ հաջողությունները, որոնք ձեռք են բերվել աստղագիտության, ֆիզիոլոգիայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության և հասարակական գիտությունների բնագավառներում:

Վերջում Ա. Մ. Պրոխորովը վստահություն հայտնեց, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների հետ հայ գիտնականների ամրապնդվող ստեղծագործական բարեկամությունը կօգնի լուծելու արդի գիտության բարդ պրոբլեմները և արժանի ավանդ ներդնելու կոմունիզմի նյութատեխնիկական բազայի գիտական հիմքի ստեղծման գործում:

Նիստին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ կառավարության ղեկավար աշխատողներ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատվիրակության անդամներ:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

(Ծննդյան 70-ամյակի առիթով)

Լրացավ Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Գուրգեն Գրիգորի Սևակի ծննդյան 70 և գիտական-դասախոսական գործունեության 45 տարին:

Գուրգեն Սևակը ծնվել է 1904 թ. Թբիլիսիում, այնտեղ էլ սովորել և ավարտել է Ներսիսյան դպրոցը: 1924 թ. ընդունվել և 1928 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1930 թ., երբ նա երկրորդ տարվա ասպիրանտ էր, սկսվում է նրա դասախոսական գործունեությունը, որ շարունակվում է մինչև օրս: 1937 թ. Գ. Սևակը ստացել է դոցենտի կոչում, 1940 թ. դիսերտացիայի պաշտպանությամբ՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 1948 թ.՝ դոկտորի աստիճան, ապա և պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Գ. Սևակը սովետահայ լեզվաբանության նշանավոր դեմքերից է: Բազմազան ու ընդարձակ է եղել նրա գիտական հետաքրքրությունների բնագավառը: Նա զբաղվել է ժամանակակից հայերենի տեսության, պատմության, ոճագիտության, տերմինաշինության, ուղղագրության և ուղղախոսության ճարտերով:

Գ. Սևակի ուսումնասիրությունները մեծ մասամբ տեսական բնույթ ունեն: Նրա առաջին լուրջ աշխատանքը, որ լույս տեսավ 1934 թ., «Լենինը և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ» խորագրով ընդարձակ հոդվածն էր, որտեղ հեղինակը լեզվական փաստերն ու երևույթները քննում ու բնութագրում է մարքս-լենինյան արտացոլման տեսության լույսի տակ:

1939 թ. լույս է տեսնում պրոֆ. Սևակի մի այլ ծավալուն հոդվածը՝ «Խոսքի մասերի ուսմունքը»2, որտեղ քննադատելով խոսքի մասերի դասակարգման տարածված կարծիքները՝ ընդունում է այն սկզբունքը, ըստ որի խոսքի մասերի դասակարգման հիմքում պիտի դրվի բառերի լեզվա-իմացաբանական ընդհանուր իմաստը:

1939—1947 թթ. առանձին մասերով լույս է տեսել Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» ուսումնասիրությունը, որը ժամանակակից արևելահայ գրական աշխարհաբարի ուսումնասիրության բնագավառում մի նոր փուրձ էր Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» հիմնարար աշխատությունից հետո: Գ. Սևակն այս գրքում բնութագրում է արևելահայ գրական աշխարհաբարը, նրա հասարակական կշիռը, խոսքի մասերը, հանգամանորեն ներկայացնում արդի հայերենի գոյական անունը, բայը, հոլովման ու խոնարհման համակարգը:

Պրոֆ. Գ. Սևակը Մառի դրույթները անքննադատ ընդունողներից չի եղել: Տակավին 1930—1932 թթ. նա քննադատել է Մառի որոշ դրույթներ, իսկ 1955 թ. իր «Տեսության» վերամշակված հրատարակությունում, որ կրում էր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» վերնագիրը, Սևակը սուր քննադատության է ենթարկում լեզվի բնութագրի, նրա ծագման ու զար-

1 *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի «Տեղեկագիր», 1934, № 1։*

2 *Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 11, 1939։*

զացման վերաբերյալ Մառի ուսմունքը: Հեղինակն այս գրքում առաջ է քաշում տեսական մի շարք արմատական հարցեր, ինչպիսիք են լեզվի և մտածողության փոխհարաբերության, լեզվի անհատական և հասարակական բնույթի, նրա ազգային էության, գրական լեզվի, բարբառների ու գրականության լեզվի փոխհարաբերության, արևելահայերենի հասարակական կշռի, ավանդականության և ավանդախախտման միջոցով լեզվի զարգացման, արևելահայերենի հնչույթային և բառային համակարգի ու ձևաբանության հարցերը, և տալիս դրանց գիտական լուծումը: Այս աշխատությանն շատ գրույթներ բռնեցին ժամանակի բնությունը: «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը» ցայսօր ծառայում է իբրև բարձրագույն դպրոցների դասագիրք:

1948 թ. լույս է տեսնում հոբելյարի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատությունը, որ նրա դոկտորական դիսերտացիան էր:

1949 թ. պրոֆեսոր Սևակը հանդես է գալիս տեսական մի նոր հոդվածով՝ «Շարահյուսության մի մանի հարցեր մարքս-լենինյան իմացաբանական լույսի տակ»3, որտեղ բնում է լեզվի և մտածողության դիալեկտիկական միասնության, ենթակայի և ստորոգյալի փոխհարաբերության հարցերը:

Հայագետի ուշադրությունից չեն վրիպել նաև ոճագիտության հարցերը: Սովետահայ ոճագիտության սկիզբը պիտի համարել Հ. Թումանյանի լեզվի ժողովրդայնության բնությունը, որ զետեղված է նրա «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» գրքում (1948 թ.). Սրան 1954 թ. հետևեց հեղինակի մի այլ հոդվածը՝ «Նաիրի Զարյանի «Ահա Դեղեցիկ» ողբերգությունը»4, որի երկրորդ մասում տրված է ողբերգության բառապաշարի, պատկերավորման միջոցների համառոտ, բայց հմուտ բնությունը: Դ. Սևակը երկար տարիներ հանրապետության բուհերում կարդացել է հայ ոճագիտության դասընթացը:

Մեծ է հոբելյարի ծառայությունը հայոց լեզվի ուսուցման բնագավառում: Նրա «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը շուրջ քառասուն տարի է, ինչ ծառայում է մայրենի լեզվի ուսուցման շնորհակալ գործին:

Նշանակալից է գիտնականի գործունեությունը ժամանակակից արևելահայ գրական լեզվի վարության, տերմինաշինության, ուղղագրության և ուղղախոսության բնագավառում: Հայտնի են նրա հոդվածները ու զեկուցումները՝ թատրոնում, պարբերականներում, ռադիոյի նաղարդումներում տեղ գտած լեզվական խեղաթյուրումների ու սխալների դեմ:



Արժեքավոր են պրոֆ. Սևակի ուսումնասիրությունները հայ գրերի ստեղծման, Մեսրոպ Մաշտոցի մասին («Մեսրոպ Մաշտոց», 1962 թ.):

Պրոֆ. Դ. Սևակը գործուն մասնակցություն է ունեցել նաև մեր հասարակական-քաղաքական կյանքին, ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը: 1932—1939 թթ. նա ղեկավարել է Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի լեզվի սեկտորը: 1941—1969 թթ. գլխավորել է համալսարանի հայոց լեզվի ամբիոնի աշխատանքները, երկար ժամանակ եղել է Անանյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի սեկտորի վարիչ:

Անուրանալի է պրոֆ. Սևակի դերը հայագիտական կադրերի պատրաստման գործում: Նրա ասպիրանտները այսօր բանասիրական գիտությունների թեկնածուներ են, դոկտորներ ու պրոֆեսորներ:

Անվանի գիտնականին ու վաստակավոր դասախոսին ցանկանք բաջառողջություն և գիտական ու դասախոսական հետագա արգասավոր կյանքի երկար տարիներ:

Ս. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

---

3 Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», 1949, հատ. 4:

4 Համալսարանի «Գիտական աշխատություններ», 1954, № 42